ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբեր 2017, № 22. 5

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Շիրակի պետական համալսարանի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 2.2.4 ենթակետով՝ ՝ ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկաների կազմակերպման եվ անցկացման ընթացակարգը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2017թ. դեկտեմբերի 28-ի նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Ս.Գ. Մինասյան

Ի փոփոխումն ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի

գիտական խորհրդի 31.03.2014թ.

նիստում հաստատված «ԳՊՄԻ ՊՈԱԿ-

ի ուսանողների պրակտիկայի

կազմակերպման և անցկացման»

ընթացակարգի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) սույն ընթացակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր: ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկայի ընթացակարգը սահմանում է պրակտիկայի բոլոր տեսակների կազմակերպման և իրականացման նպատակները, խնդիրները, փուլերը, սուբյեկտների և օբյեկտների իրավունքները և պարտականությունները, ամփոփումը և գնահատումը:

Սույն ընթացակարգի դրույթները տարածվում են բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների վրա:

Սույն ընթացակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ՇՊՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

1.1. Պրակտիկան համարվում է մասնագիտական կրթական ծրագրի կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը, որի կազմակերպումը և իրականացումը հնարավորություն է տալիս անմիջական կապ ստեղծել ուսանողի տեսական, գործնական նախապատրաստության և նրա ապագա մասնագիտական գործունեության միջև:

1.2. Ընթացակարգը ներառում է պրակտիկայի կազմակերպման ընդհանուր պայմանները՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների:

1.3. Ընթացակարգում ներառված են պրակտիկայի՝

- նպատակները, խնդիրները և փուլերը,
- պրակտիկայի կազմակերպումը,
- պրակտիկայի գործընթացի սուբյեկտների իրավունքները և պարտականությունները,
- կրկնակի պրակտիկայի անցկացման կարգը,
- ամփոփման և գնահատման կարգը:

Պրակտիկայի տևողությունը և ժամկետները որոշվում են ուսումնական պլանով՝ ըստ մասնագիտությունների:

1.4. Պրակտիկայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում են ՇՊՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնը, համապատասխան ֆակուլտետն ու մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը:

1.5. Ուսանողների պրակտիկան անցկացվում է մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան պրակտիկայի բազա հանդիսացող հաստատություններում:

2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ և ՓՈՒԼԵՐԸ

2.1. Պրակտիկայի իրականացման նպատակներն են.

2.1.1. ուսանողի՝ որպես մասնագիտական գործունեության սուբյեկտի կայացումը, նրա մասնագիտական գործունեությունը կոմպետենտ մակարդակով իրականացնելու պատրաստության ձեռքբերումը,

2.1.2. ձեռք բերած տեսական գիտելիքների հիման վրա աշխատանքային կարողությունների ձևավորումը,

2.1.3 մասնագիտական հմտությունների ձևավորումը:

2.2. Պրակտիկայի իրականացման խնդիրներն են.

2.2.1. ծանոթություն մասնագիտական կրթական ծրագրի կողմնորոշիչներով պայմանավորված կառույցներին և դրանց աշխատանքներին,

2.2.2.մասնագիտական գործունեության նկատմամբ հետաքրքրության խթանում,

2.2.3. մասնագիտական խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման ձևավորում,

2.2.4. մասնագիտական գործունեություն իրականացնելու պատասխանատվության ձևավորում:

2.3. Պրակտիկայի անցկացման ժամկետները որոշվում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանի ժամանակացույցին համապատասխան: ՇՊՀ-ի գիտական խորհուրդը առանձին դեպքերում իրավասու է ուսումնական տարվա ընթացքում տեղաշարժել պրակտիկայի անցկացման ժամկետները:

2.4. Պրակտիկայի իրականացման փուլերն են.

2.4.1.Ճանաչողական- կազմակերպչական փուլ,

2.4.2. Կիրառական- վերլուծական փուլ,

2.4.3. Ամփոփիչ- գնահատող փուլ:

Պրակտիկայի փուլերն իրականացվում են մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների և մասնագիտական պրակտիկաների միջոցով:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների համար կազմակերպվում են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաներ:

3.1. Ուսումնական պրակտիկայի հիմնական նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը, ուսանողների հմտությունների և կարողությունների ձեռքբերումը:

3.2. Արտադրական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործնական աշխատանքների հիման վրա մասնագիտական հմտությունների ձևավորումը:

3.3. Մանկավարժական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողների՝ որպես ապագա ուսուցչի, մանկավարժական փորձառության ձեռք բերումը և փորձուսուցումը:

3.4. Առարկայի շրջանակում ուսումնական պրակտիկայի նպատակն է սովորեցնել կիրառել տվյալ առարկայի շրջանակում ձեռք բերված գիտելիքները և զարգացնել գործնական հմտությունները: Առարկայի շրջանակում ուսումնական պրակտիկան բազմագործոնային գնահատման բաղադրիչ է:

4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. ՇՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողի կողմից պրակտիկայի վայրի և դրան ամրացված մեթոդիստի ընտրությունն իրականացվում է համապատասխան մասնագիտական ամբիոնի առաջարկության հիման վրա:

4.2. Պրակտիկայի վայրի փոփոխություն, որպես կանոն, կարող է կազմակերպվել ՇՊՀ-ի ռեկտորի հրամանով՝ պրակտիկանտի դիմումի, փոփոխված վայրից համաձայնագրի և համապատասխան տեղեկանքի հիման վրա:

Պրակտիկայի վայրի փոփոխություն կազմակերպվում է այն ուսանողների համար, ովքեր՝

- բնակվում են բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններում,
- նպատակային տեղերում սահմանված կարգով ընդունված ուսանողներ են (պրակտիկան կազմակերպվում է համապատասխան հայտ ներկայացրած վայրում),
- հղի են կամ ունեն մինչև երկու տարեկան երեխա,
- ունեն կրթական առանձնահատուկ պայմանների կարիք,
- աշխատում են իրենց մասնագիտությամբ:

4.3. Մինչև պրակտիկայի սկսվելը ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի կողմից անցկացվում է խորհրդատվություն մեթոդիստների և պրակտիկանտների հետ, որի ժամանակ քննարկվում և պարզաբանվում են պրակտիկայի ընթացքում նախատեսվող աշխատանքների, օրագրերի լրացման կարգի, պրակտիկայի գործընթացի սուբյեկտների իրավունքների և պարտականությունների հարցերը:

4.4. Պրակտիկայի վայրում բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների ամենօրյա ծանրաբեռնվածությունը 6 ակադեմիական ժամ է, իսկ մեթոդիստի ծանրաբեռնվածությունը չորսշաբաթյա պրակտիկայի դեպքում՝ 8 ժամ, հինգշաբաթյա պրակտիկայի դեպքում՝ 10 ժամ:

4.5. Պրակտիկայի ամբողջ գործընթացը ուսանողի կողմից արձանագրվում է պրակտիկանտի օրագրում:

5.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի պարտականություններն ու իրավունքները.

- ապահովում է պրակտիկայի հստակ կազմակերպումը, պլանավորումը և արդյունքների հաշվառումը, կազմում է պրակտիկայի անցկացման համահամալսարանական պլան-գրաֆիկ,
- ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի համակարգմամբ նախապատրաստում և մասնագիտական ամբիոնը անցկացնում է պրակտիկային նվիրված խորհրդատվություններ,
- վերահսկում է պրակտիկանտների հաճախումները,
- վերահսկում է պրակտիկայի գործընթացի մասնակիցների աշխատանքը,
- միջոցներ է ձեռնարկում պրակտիկայի գործընթացում նկատվող թերությունները վերացնելու համար,
- ապահովում է պրակտիկայի վայր հանդիսացող հիմնարկության ներկայացուցիչների վարձատրման գործընթացի փաստաթղթային կողմը:

5.2. Պրակտիկայի ղեկավարի /մեթոդիստի/ պարտականություններն ու իրավունքները.

- Իրականացնում է պրակտիկանտների անմիջական ղեկավարությունը,
- Կազմակերպում և անցկացնում է պրակտիկայի վերաբերյալ խորհրդակցություններ,
- Մասնագիտական ամբիոնի համակարգմամբ՝ հաստատում է պրակտիկանտ-ուսանողների աշխատանքի անհատական պլանները, վերահսկում դրանց կատարման ընթացքը, կազմակերպում այդ աշխատանքների քննարկումներ և վերլուծություններ,
- օժանդակում է ուսանողներին պրակտիկայի անցկացման և հաշվետվության ձևակերպման հետ կապված բոլոր հարցերում,
- վերահսկում է պրակտիկանտների հաճախումները,
- գնահատում է ուսանողների պրակտիկան,
- մասնագիտական ամբիոնում հաշվետվություն է ներկայացնում ուսանողների պրակտիկայի վերաբերյալ:

5.3. Ուսանող պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները.

- ընտրել պրակտիկայի վայրը և մեթոդիստին,
- անհրաժեշտության դեպքում դիմում ներկայացնել պրակտիկայի վայրը փոխելու մասին,
- ծանոթանալ պրակտիկայի անցկացման վայրի պայմաններին ու հնարավորություններին,
- խորհրդակցել պրակտիկայի ղեկավարի, պրակտիկայի անցկացման վայրի մասնագետների հետ:
- ենթարկվել պրակտիկայի վայր հանդիսացող հաստատության ներքին կանոնակարգին, նրա տնօրենի և պրակտիկայի ղեկավարի պահանջներին,
- պահպանել աշխատանքային կարգապահությունը, ամբողջովին կատարել պրակտիկայի՝ ծրագրով նախատեսված աշխատանքները,
- ուսումնա-դաստիարակչական, մշակութային, հասարակական միջոցառումների կազմակերպման և անցկացման ընթացքում հանդես բերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում,

- ըստ սահմանված կարգի՝ կազմել հաշվետվություն՝ կատարած աշխատանքի մասին՝ արդյունքների ամփոփմամբ,
- պրակտիկայի ավարտից հետո՝1 շաբաթվա ընթացքում, ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոն հանձնել լրացված և գնահատված օրագիրը:

6. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ և ԳՆԱՀԱՏՈՒՄՆ

6.1. Պրակտիկայի ամփոփումը կազմակերպվում է մասնագիտական ամբիոնում ուսանողի կողմից ներկայացված պրակտիկայի հաշվետվության ներկայացման միջոցով:

6.2. Պրակտիկայի գնահատումը կատարվում է մեթոդիստի կողմից ՇՊՀ-ում գործող գնահատման համապատասխան բալային համակարգով: Ուսանողը կարող է բողոքարկել իր գնահատականը:

6.3. 50%-ից ավելի բացակայությունների դեպքում ուսանողի պրակտիկան գնահատվում է անբավարար:

6.4. Պրակտիկային անհարգելի պատճառով չմասնակցած կամ անբավարար գնահատված ուսանողները ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի ներկայացմամբ և ֆակուլտետի դեկանի միջնորդությամբ ենթակա են վտարման: Բացառիկ դեպքերում (առողջական խնդիրներ, հղիություն, մինչև 2 տարեկան երեխա, արտակարգ իրավիճակներ, ծառայողական հատուկ ռեժիմ) ներկայացված դիմումի, համապատասխան տեղեկանքի և/կամ կրեդիտ վճարման անդորրագրի հիման վրա ռեկտորատը կարող է թույլատրել նրանց կրկնակի պրակտիկայի անցկացումը նոր ժամանակացույցով:

7. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1.Պրակտիկայի կազմակերպման և անցկացման մեկ ժամի արժեքը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով 240 /երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ է, որը ներառում է ՀՀ օրենքներով նախատեսված հարկերը.

4-շաբաթյա պրակտիկայի դեպքում նախատեսված է 1 ուսանողի համար վճարել 12 ժամի դիմաց,

5-շաբաթյա պրակտիկայի դեպքում նախատեսված է 1 ուսանողի համար վճարել 18 ժամի դիմաց,

առարկայի շրջանակում ուսումնական (շաբաթական 1 օր, օրական 6 ժամ) պրակտիկայի դեպքում նախատեսված է 1 խմբի (առավելագույնը՝ 10 ուսանող) համար վճարել 12 ժամի դիմաց:

7.2. Կատարված աշխատանքի համար Պատվիրատուն վճարումը կատարում է փոխանցման կարգով հաշիվ ապրանքագրի և կատարողական ակտի հիման վրա:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում ՇՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատման հաջորդ օրվանից: